

Երուսաղէմի ապացոյց գոլ ասէր, եւ զՍառա  
 ապացոյց ազատին եկեղեցւոյ եւ զԱզար աղախինն՝  
 Հնոյ օրինացն ծառայականի: Զինչ ասելի է  
 եւ զայլաբանօրէն խօսակցութենէ Հնագունից  
 Հեթանոսացն փիլիսոփայից, որոց ոմն զբաժանական  
 Հնարն Պռիմիթեայ երեւելական հրոյն նմանե-  
 ցուցանէր, իբր թէ Պռիմիթեաւ գողացեալ իցէ  
 յաստուածոցն հուր եւ շնորհեալ մարդկան. զոր  
 մեկնէ Գաւիթ փիլիսոփայն ի վերայ բաժանական  
 Հնարին. զի նախ Պռիմիթեաւ, ասէ, եգիտ զբա-  
 ժանական Հնարն: Իսկ եւ Պղատոն՝ զիմաստու-  
 թիւնն բարոյականապէս սահմանելով՝ խօկումն  
 մահու յորջորջէր. զոր Ալէոմպրոտոս զբանական  
 մահուանէն ասացեալ գոլ իմացեալ, ի բարձրաբերձ  
 պարսպաց ի դժոխս վազէր դահալիթութեամբ:  
 Արդարեւ եթէ այլաբանական մեկնութիւն Սուրբ  
 Գրոց ոչ լինէր՝ յոլովագոյն թիւն մարդկանց լինէր  
 որպէս զԱլէոմպրոտոս Ամբրակիացին, զոր եւ սուրբն  
 Գաւիթ անյաղթ փիլիսոփայն՝ խնայելով ի համբակս,  
 զի մի նմանիցէին յիմարութեան Ալէոմպրոտոսի,  
 ասէր, արդ զի մի լինիցին բազում Ալէոմպրոտոսք,  
 եւ այլն: Ամենով ուրեմն եւ ինքն Աստուած՝ զի մի  
 հաւատացեալքն իւր ի նկարագրութենէն Սուրբ  
 Գրոց ստերիւրէին եւ սխալէին, հաճեցաւ ի ձեռն  
 սրբոց վարդապետաց զԱստուածաշունչ գրեանսն  
 իւր ըստ տեղւոյ եւ ըստ պատշաճին զանազան  
 կերպիւ մեկնել եւ թարգմանել եւ մանաւանդ  
 այլաբանական մեկնութեամբք, որ կարի ախոր-  
 ժալին է ամենայն զբօսնողաց եւ յայլմէ՝ զայլս  
 իմանալ կամեցողաց: Եւ այս իսկ է մանաւանդական  
 գործ բանականի բնութեան. ըստ որում եւ  
 սահմանն բանականին յայտ առնէ. զի բանականն է  
 ներխուզական պատճառի եւ պաճառեցելոյ. նմին  
 իրի եւ բաղադրեալ: Քանզի եթէ ոք ներխուզել  
 ախորժիցէր զպատճառս այլաբանօրէն խօսակցու-  
 թեանց Սուրբ Գրոց ի վերայ հրեշտակաց, հար-